Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
31.08.2020թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ քրեական իրավունք 3
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, անվճար ուսուցում
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Մ.Մարկոսյան (ի.գ.թ., դոցենտ) E-mail: misakmmm100@mail.ru, հեռ. 093 60 15 70
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս, 5-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		4 (չորս)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ քրեական իրավունք 3» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 120 ժամ, որից 32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունք, 16 ժամ գործնական պարապմունք, 56 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ընթացիկ ստուգում հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ քրեական իրավունք 3» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը, ինչպես նաև մարդու դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ քրեական իրավունքի հատուկ մասի ընդհանուր բնութագրի ուսումնասիրությունը, ինչպես նաև կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների և ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական բնութագրի վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • ներկայացնել քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը, համակարգը և նշանակությունը, • ուսումնասիրել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը, • ներկայացնել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների հիմնական հանցակազմերը, • ուսումնասիրել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների ծանրացուցիչ հանգամանքները, • ներկայացնել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունները, • ուսումնասիրել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների և հարակից հանցագործությունների սահմանազատման չափանիշները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **Կարողանա՝**		1. սահմանել քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը, 2. ներկայացնել քրեական իրավունքի հատուկ մասի համակարգը, 3. վերլուծել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների հիմնական հանցակազմերը, 4. թվարկել և պարզաբանել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների ծանրացնող հանգամանքները, 5. ներկայացված կոնկրետ իրավիճակում ճիշտ որակել կյանքի և

		առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները, 6. մատնանշել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների և հարակից հանցակազմերի տարբերությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ 2. Ս.Առաքելյան և ուրիշներ: ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Դասագիրք բուհերի համար: ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 3. Գ.Թ.Գրիգորյան, Մ.Մ.Մարկոսյան ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեաիրավական նորմերի կիրառման վերաբերյալ/Երկրորդ լրամշակված հրատարակություն/Երևան, <<Արման Ասմանգուլյան>> ԱՁ տպարան, 2015թ., 300 էջ, 4. Գրիգորյան Մ., Ջիլֆուղարյան Մ., Անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների որակման տեսական ու գործնական հիմունքները, Երևան, 2004թ. 5. Թամազյան Ա., Անձի դեմ ուղղված հանցագործություններ, Երևան, 2005թ. 6. Уголовное право. Общая и особенная части/ Под ред. Н.Г. Кадникова.- М.: “Городец”, 2006. 7. Ветров Н.И. Уголовное право. Общая и Особенная части.- М.: “Книжный мир”, 2005. 8. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации/ Под общ. ред. В.М.Лебедева. - М.: «НОРМА», 2004.
Լրացուցիչ		1. Մ.Մարկոսյան Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու որակման որոշ հարցեր//Բանբեր Երևանի համալսարանի, 2015, N 1 (16), էջեր 52-61: 2. Ա.Մելիքսեթյան Հանցագործությունների վերաորակման հիմքերը մինչդատական վարույթում //Բանբեր Երևանի համալսարանի, 2014, N 3 (144), էջեր 32-37: 3. Ա.Մելիքսեթյան Վտանգի մեջ թողնելու քրեաիրավական բնութագիրը և որակման առանձնահատկությունները//Բանբեր Երևանի համալսարանի, 2015, N 1 (16), էջեր 61-70: 4. Լ.Գրիգորյան Ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանության քրեաիրավական բնութագիրը//Պետություն և իրավունք, 2015թ., թիվ 2 (68), էջեր 63-68: 5. Լ.Գրիգորյան, Քրեական պատասխանատվությունը էվթանազիայի համար //Բանբեր Երևանի համալսարանի, N 1(142), 2014, էջեր 53-61: 6. Հ.Սմբատյան Քեական պատասխանատվությունը ապօրինի աբորտի համար ՀՀ-ում և արտերկրում//Դատական իշխանություն, 2015թ., 8-9 (193-194), էջեր 64-69: 7. Դ.Թումասյան «Անօգնական վիճակ» եզրույթը երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործությունների համատեքստում// «Օրինականություն» ՀՀ դատախազության հանդես, 2015, թիվ 88, էջ 26-32: 8. Зубкова В.И. Ответственность за преступления против личности по законодательству России. М., 2005.

9. Аветисян С.С. Убийство в состоянии афекта. Ереван, 2001.
10. Бородин С.В. Преступления против жизни. 2-е изд. СПб., 2003.
11. Попов А.Н. Убийство при отягаюших обстаятельствах., ЦПБ., 2003.
12. Оганян Р.Э. Похищение человека: исторические и правовые проблемы. М, 2001.
13. Андреева Л.А., Цэнгэл С.Д. Квалификация изнасилований. 2-е изд. СПб., 2004.
14. Озова Н.А. Насильственные действия сексуального характера. М., 2006.
15. Бушков Д.В., Кибальник А.Г., Соломоненко И.Г. Тайна личной корреспонденции в уголовном праве России. Ставрополь, 2005.
16. Зубкова В.И. Ответственность за преступления против личности по законодательству России. М., 2005.
17. Кибальник А.Г., Клочков В.Н., Соломоненко И.Г. Уголовная ответственность за нарушение неприкосновенности частной жизни. Ставрополь, 2005.
18. Нуркаева Т.Н. Личные (гражданские) права и свободы человека и их охрана уголовно-правовыми средствами. СПб., 2003.
19. Мачковский Л.Г. Охрана личных, политических и трудовых прав в уголовном законодательстве России и зарубежных государств. М., 2004.
20. Белов В.Ф. Преступления против семьи и несовершеннолетних. М., 2002

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգարք (ստուգված, չստուգված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը, համակարգը, նշանակությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը և նշանակությունը 2. Քրեական իրավունքի հատուկ մասի համակարգը 3. Հանցագործությունների որակումը և դրա նշանակությունը	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Սովորողներին առաջարկվում է վերհիշել քրեական իրավունքի ընդհանուր և հատուկ մասերի փոխկապակցվածությունը, նրանց հնարավորություն է տրվում արտահայտել սեփական տեսակետը: Հարց 3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, կազմում աղյուսակներ, որոնցում մատնանշում են որակման առանձին տեսակների փոխկապակցվածությունը: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը, համակարգը, քննարկում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 2 **Կյանքի դեմ ուղղված հանցագործություններ** **(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապունք, 4 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հասարակ սպանություն 2. Ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն 3. Մեղմացուցիչ հանգամանքներում սպանություն 4. Անզգուշությամբ մահ պատճառելը 5. Ինքնասպանության հասցնելը և ինքնասպանության հակելը	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն՝ զուգահեռաբար ներկայացնելով քննարկվող հանցագործությունների որակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հարցեր 1-5– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ դասախոսության ժամանակ ներկայացված նյութը յուրացնելու և տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ միաժամանակ առանձնացնելով անհասկանալի մնացած հարցերը: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ուսումնասիրված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրն ու որակման առանձնահատկությունները: Դասախոսը

	պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Սովորողներին առաջարկվում է թեմայի վերաբերյալ հարցեր տալ միմյանց: Հարցեր 1-5 – անցկացվում է գործնական պարապմունք, որի ընթացքում սովորողները կատարում են իրավիճակային խնդիրներում ներկայացված հանցագործությունների որակում, հիմնավորում են սեփական տեսակետը:

Թեմա 3 **Առողջության դեմ ուղղված հանցագործություններ** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 4 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը 2. Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը 3. Մեղմացուցիչ հանգամանքներում առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը 4. Առողջությանը թեթև վնաս պատճառելը 5. Ծեծ: Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը: 6. Անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը 7. Անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը 8. Մարդու կյանքն ու առողջությունը վտանգի տակ դնող հանցագործություններ	Հարցեր 1-8 – ներկայացվում է դասախոսություն՝ զուգահեռաբար ներկայացնելով քննարկվող հանցագործությունների որակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հարցեր 1-8– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ դասախոսության ժամանակ ներկայացված նյութը յուրացնելու և տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ միաժամանակ առանձնացնելով անհասկանալի մնացած հարցերը: Հարցեր 1-8 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ուսումնասիրված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրն ու որակման առանձնահատկությունները: Դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Սովորողներին առաջարկվում է թեմայի վերաբերյալ հարցեր տալ միմյանց: Հարցեր 1-8 – անցկացվում է գործնական պարապմունք, որի ընթացքում սովորողները կատարում են իրավիճակային խնդիրներում ներկայացված հանցագործությունների որակում, հիմնավորում են սեփական տեսակետը:

Թեմա 4 **Անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդուն առևանգելը 2. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը 3. Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով	Հարցեր 1-7 – ներկայացվում է դասախոսություն՝ զուգահեռաբար ներկայացնելով քննարկվող

իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը 4. Շահագործման մեջ գտնվող անձի ծառայություններից օգտվելը 5. Ազատությունից ապօրինի զրկելը 6. Հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը 7. Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը	հանցագործությունների որակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հարցեր 1-7– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ դասախոսության ժամանակ ներկայացված նյութը յուրացնելու և տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ միաժամանակ առանձնացնելով անհասկանալի մնացած հարցերը: Հարցեր 1-7 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ուսումնասիրված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրն ու որակման առանձնահատկությունները: Դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Սովորողներին առաջարկվում է թեմայի վերաբերյալ հարցեր տալ միմյանց: Հարցեր 1-7 – անցկացվում է գործնական պարապմունք, որի ընթացքում սովորողները կատարում են իրավիճակային խնդիրներում ներկայացված հանցագործությունների որակում, հիմնավորում են սեփական տեսակետը

Թեմա 5 **Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Բռնաբարություն 2. Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ 3. Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը 4. Սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ 5. Անառակաբարո գործողություններ	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն՝ զուգահեռաբար ներկայացնելով քննարկվող հանցագործությունների որակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հարցեր 1-5– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ դասախոսության ժամանակ ներկայացված նյութը յուրացնելու և տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ միաժամանակ առանձնացնելով անհասկանալի մնացած հարցերը: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ուսումնասիրված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրն ու որակման

	առանձնահատկությունները: Դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Սովորողներին առաջարկվում է թեմայի վերաբերյալ հարցեր տալ միմյանց: Հարցեր 1-5 – անցկացվում է գործնական պարապմունք, որի ընթացքում սովորողները կատարում են իրավիճակային խնդիրներում ներկայացված հանցագործությունների որակում, հիմնավորում են սեփական տեսակետը:

Թեմա 6 **Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը 2. Քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը 3. Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը 4. Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը և դրա տեսակները 5. Հեղինակային և հարակից իրավունքները խախտելը 6. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովի աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը 7. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը	Հարցեր 1-7 – ներկայացվում է դասախոսություն՝ զուգահեռաբար ներկայացնելով քննարկվող հանցագործությունների որակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հարցեր 2-7– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ դասախոսության ժամանակ ներկայացված նյութը յուրացնելու և տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ միաժամանակ առանձնացնելով անհասկանալի մնացած հարցերը: Հարցեր 1-7 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ուսումնասիրված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրն ու որակման առանձնահատկությունները: Դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Հարցեր 2-7 – անցկացվում է գործնական պարապմունք, որի ընթացքում սովորողները կատարում են իրավիճակային խնդիրներում ներկայացված հանցագործությունների որակում, հիմնավորում են սեփական տեսակետը:

Թեմա 7 **Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը	Հարցեր 1-10 – ներկայացվում է դասախոսություն՝ զուգահեռաբար

2. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը 3. Ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը 4. Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը 5. Որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը 6. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը 7. Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը 8. Երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը 9. Խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքները չարաշահելը 10. Ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը: Զավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելը	ներկայացնելով քննարկվող հանցագործությունների որակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հարցեր 2-10– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ դասախոսության ժամանակ ներկայացված նյութը յուրացնելու և տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ միաժամանակ առանձնացնելով անհասկանալի մնացած հարցերը: Հարցեր 1-10 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ուսումնասիրված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրն ու որակման առանձնահատկությունները: Դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Սովորողներին առաջարկվում է թեմայի վերաբերյալ հարցեր տալ միմյանց: Հարցեր 2-10 – անցկացվում է գործնական պարապմունք, որի ընթացքում սովորողները կատարում են իրավիճակային խնդիրներում ներկայացված հանցագործությունների որակում, հիմնավորում են սեփական տեսակետը:

Հարցաշար

«ՀՀ քրեական իրավունք 3» դասընթացի ստուգարքի

1. Սպանություն, դրա ընդհանուր քրեաիրավական բնութագիրը
2. Երկու կամ ավելի անձանց սպանություն
3. Անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ
4. Ակնհայտ հղի կնոջ, առանձին դաժանությամբ սպանություն
5. Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանություն
6. Շահադիտական դրդումներով, պատվերով, ինչպես նաև շորթմամբ, ավազակությամբ կամ բանդիտիզմով զուգորդված սպանություն
7. Խուլիգանական դրդումներով, այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով սպանություն
8. Բռնաբարությամբ կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններով զուգորդված սպանություն
9. Տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով կատարված սպանություն
10. Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն և դրա տեսակները
11. Մոր կողմից նորածին երեխայի սպանությունը
12. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանություն
13. Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանություն
14. Ինքնասպանության հասցնելը
15. Ինքնասպանության հակելը
16. Անզգուշությամբ մահ պատճառելը

17. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, դրա տեսակները
18. Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը
19. Դիտավորությամբ առողջությանը թեթև ծանրության վնաս պատճառելը
20. Անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը
21. Ծեծ
22. Վտանգի մեջ թողնելը
23. Ապօրինի աբորտ կատարելը
24. Մարդուն առևանգելը և դրա տեսակները
25. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը
26. Ազատությունից ապօրինի զրկելը
27. Հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը և դրա տեսակները
28. Բռնաբարություն, դրա տեսակները
29. Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, դրա տեսակները
30. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի հետ
31. Սեռական հարաբերությանը կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը
32. Անառակաբարո գործողություններ, դրա տեսակները
33. Քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը և դրա տեսակները
34. Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը
35. Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը և դրա տեսակները
36. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովի աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը և դրա տեսակները
37. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը
38. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը և դրա տեսակները
39. Երեխային ծնողներից ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը
40. Երեխայի դաստիարակության պարտականությունը չկատարելը